ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 515 - Ա **26 դեկտեմբերի 2016 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻԻ 20-Ի N 259-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի 1-ին պարբերության դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 20-ի <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների /տնօրենների/ ընտրության /նշանակման/ մրցութային հանձնաժողովների անդամության թեկնածուների ցուցակը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի մարտի 5-ի N 46–Ա և հոկտեմբերի 8-ի N 200-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 259-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների /տնօրենների/ ընտրության /նշանակման/ մրցութային հանձնաժողովների անդամության թեկնածուների ցուցակը, շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2016 թ. դեկտեմբերի 26-ի
N 515-Ա որոշման

<<Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2012 թ. դեկտեմբերի 20-ի
N 259-Ա որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՄ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ /ՏՆՕՐԵՆՆԵՐԻ/ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ /ՆՇԱՆԱԿՄԱՆ/ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ

Գրիգորյան Ռաֆիկ	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետ
Հակոբյան Անդրանիկ	- մարզպետի տեղակալ
Հակոբյան Կարեն	- մարզպետի տեղակալ
Նիկոյան Արտաշես	- մարզպետի տեղակալ
Խլղաթյան Սևակ	- մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Աղեկյան Ալբերտ	- մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Պողոսյան Անուշ	- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Գրիգորյան Վաչագան	- մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
Մուշեղյան Յուրա	- մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
Բաղալյան Գարիկ	- մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Զոհրաբյան Արմեն	- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ
Համբարձումյան Համբարձում	– մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Ղուկասյան Վերգինե	- մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ

Ստեփանյան Նելսոն	- մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ
Խաչատրյան Հայկ	- մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի վարիչ
Մնացականյան Վարդուհի	- մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ
Շահբազյան Հասմիկ	- մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ
Ղազարյան Նորիկ	- մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ
Ստեփանյան Էդիկ	- մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչ
Գալոյան Մամիկոն	- մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ
Ղուլոյան Հակոբ	- մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի վարիչ
Խաչատրյան Վիգեն	- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի վարիչ>>:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ